


# Վրաստանի աշխարհաքաղաքական տեղաշարժը. ներքին և արտաքին գործոններ

Քերյան Գարիկ Մ.

քաղաքական գիտությունների դոկտոր, Քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր,  
Երևանի պետական համալսարան (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0000-0002-7538-3857>

[g.keryan@ysu.am](mailto:g.keryan@ysu.am)

ՀՏԳ՝ 327.8; EDN: DRVMVH;

DOI: 10.58587/18292437-2024.5-20

**Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝** Վրաստան, Հարավային Կովկաս, «Վրացական երազանք», Իվանիշվիլի, «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին օրենք», ներքաղաքական ճգնաժամ, Չուրաբիշվիլի, ԱՄՆ, ԵՄ, Ռուսաստան, Կոբախիձե

## Геополитический сдвиг Грузии: внутренние и внешние факторы

Керян Гарик М.

доктор политических наук, профессор кафедры политологии, ЕГУ (Ереван, РА)

**Аннотация.** На постсоветском пространстве, Южный Кавказ всегда выделялся как наиболее конфликтный регион. Три могущественных соседа региона – Россия, Турция и Иран – постоянно следят за развитием событий здесь, стремясь увеличить дозу влияния. В результате смены власти, в 2012 году, к власти в Грузии пришла партия «Грузинская мечта», и антироссийские настроения в стране начали снижаться. Несмотря на все давление, власти Грузии не присоединились к санкциям, введенным США и Евросоюзом против России. Партия «Грузинская мечта» выступила с законодательной инициативой об иностранных агентах в 2023 году, после чего столкнулась с массовыми протестами. В результате законопроект был отозван, но уже в следующем, 2024 году, большинство членов парламента снова внесли законопроект и в 28-ого мая приняли его. В Грузии, в 2023-2024 гг., вокруг этого закона происходят внутривнутриполитические процессы, включающие в себя и вопрос смены внешнеполитического вектора.

**Ключевые слова и словосочетания:** Грузия, Южный Кавказ, «Грузинская мечта», Иванишвили, «Закон о прозрачности внешнего влияния», внутривнутриполитический кризис, Зурабишвили, США, ЕС, Россия, Кобахидзе

## Georgia's Geopolitical Shift: Internal and External Factors

Keryan Garik M.

Doctor of Political Science, professor of the Department of Political Science, ESU (Yerevan, RA)

**Abstract.** In the post-Soviet space, the South Caucasus has always stood out as the most conflict-ridden region. Three powerful neighbors of the region - Russia, Turkey and Iran - constantly monitor developments here, seeking to increase the dose of influence. As a result of the change of power, in 2012, the Georgian Dream party came to power in Georgia, and anti-Russian sentiments in the country began to decline. Despite all the pressure, the Georgian authorities did not join the sanctions imposed by the United States and the European Union against Russia. The «Georgian Dream» party put forward a legislative initiative on foreign agents in 2023, after which it faced mass protests. As a result, the bill was withdrawn, but already in the next year, 2024, the majority of members of parliament again introduced the bill and on May 28th it was adopted. In Georgia, in 2023-2024, domestic political processes are taking place around this law, including the issue of changing the foreign policy vector.

**Keywords & phrases:** Georgia, South Caucasus, Georgian Dream, Ivanishvili, Law on Transparency of Foreign Influence, domestic political crisis, Zurabishvili, USA, EU, Russia, Kobakhidze

**Մուտք:** ԽՍՀՄ ինքնափոլուզումից ի վեր Հարավային Կովկասը հետխորհրդային տարածության մեջ մշտապես առանձնացել է որպես առավել բարձր կոնֆլիկտայնությամբ տարածաշրջան: Ղարաբաղյան, հարավօսական և արխազական էթնոքաղաքական հակամարտությունները, ներքաղաքական ցնցումները, հեղափոխական ռճով իշխանափոխությունները 2003 թ. Վրաստանում և 2018 թ. Հայաստանում, 1991-94

թթ. ղարաբաղյան առաջին պատերազմը, 2008 թ. ռուս-վրացական պատերազմը, 2020 թ. ղարաբաղյան երկրորդ պատերազմը, հայ-ադրբեջանական սահմանային հակամարտությունը և այլ ներքաղաքական և արտաքին քաղաքական իրադարձություններ տարածաշրջանը պահում են եռացող կաթսայի կարգավիճակում: Տարածաշրջանի երեք հզոր հարևանները՝ Ռուսաստանը, Թուրքիան և Իրանը, մշտապես

հետևում են այստեղի զարգացումներին, ձգտելով առավելագույնս ապահովել իրենց շահերը և մեծացնել ազդեցության չափաբաժինը և մասնակցությունը հակամարտությունների կարգավորման գործընթացներին: Իհարկե հավաքական Արևմուտքը ևս պայքարում է այդ գործընթացները վերահսկելու լծակները դեպի Վաշինգտոն և Բյուսել տեղափոխելու համար: Վերջիններիս հիմնական նպատակը ռուսական և իրանական գործոնների չեզոքացումն է: Միաժամանակ քաղաքագիտական շրջանակներում բավականին ակտիվ հետաքրքրություն է հարուցել Վրաստանի արտաքին քաղաքական վեկտորի հնարավոր փոփոխության հարցը:

Վրաստանը, անկախության հռչակումից ի վեր, հիմնականում դիրքավորվել էր, որպես հակառուսական և արևմտամետ պետություն: Այս քաղաքական գիծը առավել կոշտացավ 2003 թ. գումալորի հեղափոխության և 2008 թ. իրադարձությունների ժամանակ, երբ Ռուսաստանը ճանաչեց Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունը: Երկրում հակառուսականության անկում սկսվեց 2012 թ.-ից հետո, երբ իշխանափոխության հետևանքով հեռացվեց հակառուս/արևմտամետ նախագահ Սահակաշվիլին և իշխանության եկավ Բիժինա Իվանիշվիլիի «Վրացական երազանք» կուսակցությունը: Այնուհետև նոր իրողություններ բերեց 2022 թ. սկսված ուկրաինական պատերազմը: Հակառակ բոլոր ճնշումներին Վրաստանի իշխանությունները չմիացան ՌԳ նկատմամբ ԱՄՆ-ի և Եվրոմիության սահմանած լայնածավալ պատժամիջոցներին, հիմնավորելով այն երկրի ազգային/պետական շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ: Երկիրը արևմտյան ուղեծրում պահելու համար Վրաստանին տրվեց ԵՄ անդամության թեկնածուի կարգավիճակ, այն դեպքում, երբ ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի անդամակցության ուղղությամբ քսան տարի շարունակ ոչ մի առաջընթաց չէր գրանցվել: Մոսկվան ակնհայտորեն գոհ է «Վրացական երազանքի» գործողություններից, որոնք բարդացնում են Վրաստանի և Արևմուտքի հարաբերությունները: Կրեմլը հասկանում է՝ որքան ավտորիտար դառնա Վրաստանը, այնքան ավելի հավանական է, որ կողմնորոշումը Բյուսելից կտեղափոխվի Մոսկվա: Բնականաբար հյուսիսային հարևանին ձեռնտու է նաև արտասահմանյան գործակալների մասին օրենքի շուրջ ծավալված 2023-24 թթ. ներքաղաքական բախումներում վրացական իշխանությունների դիրքորոշումը:

**Ներքաղաքական ճգնաժամի ընթացքը 2023 թ.-ին:** 2003 թ. «Վարդերի հեղափոխությունից հետո» արևմտյան հետազոտական կենտրոններում և մեդիադաշտում Վրաստանը սովորաբար համարվում է հետխորհրդային

տարածքում սակավաթիվ ժողովրդավարական երկրներից մեկը: Սակայն այժմ, այս նույն կենտրոններում, ավելի հաճախ է շրջանառվում այն կարծիքը, որ երկրի քաղաքական համակարգում սկսել են ներթափանցել ավտորիտար միտումներ: Որպես դրա վաղ ապացույց նշվում է վերջին քաղաքական ճգնաժամը:

2023 թ. գարնանը իշխող «Վրացական երազանք» կուսակցությունը փորձեց ընդունել օրենք օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին, որն անվանում են նաև օտարերկրյա գործակալների մասին օրենք<sup>1</sup>: Այն հիշեցնում էր Ռուսաստանում ընդունված համանման օրենսդրական փաստաթուղթը [1]: Սակայն այդ ժամանակ վրացական իշխանությունները ստիպված եղան հրաժարվել [2] այդ գաղափարից՝ բախվելով փողոցային զանգվածային բողոքի գործողություններին [3] և միջազգային հանրության քննադատությանը: Արդյունքում հաջողվեց խուսափել Ճգնաժամի սրացումից: Վարչապետ Լադիբաշվիլին խորհրդարանի օրակարգից հանեց մեծ աղմուկ հարուցած օրինագիծը:

<sup>1</sup> «Օտարերկրյա գործակալների գրանցման ակտը» (FARA) ընդունվել է 1938 թվականին՝ կանխելու նացիստական քարոզչությունը Միացյալ Նահանգներում: Օրենքի հիմնական նպատակն է Միացյալ Նահանգներում խթանել արտաքին ազդեցությանը պայմանավորված գործունեության թափանցիկությունը: Օրենքը պահանջում է օտարերկրյա գործակալների պարտադիր գրանցում ԱՄՆ արդարադատության նախարարությունում, վեց ամիսը մեկ անգամ կանոնավոր հաշվետվությունների ներկայացում՝ գործունեության և ֆինանսավորման վերաբերյալ, օտարերկրյա սուբյեկտների շահերից ելնելով տարածվող բոլոր նյութերի հրապարակում: FARA-ն չի արգելում օտարերկրյա ֆինանսավորումը, սակայն սպառնում է թափանցիկություն: 2012 թվականին Ռուսաստանում ընդունվեց օտարերկրյա գործակալների մասին օրենքը, որը հետագայում մի քանի փոփոխությունների ենթարկվեց: Մոսկվան պնդում է՝ օրենքի հիմքում Միացյալ Նահանգներում դեռ 1938 թվականից գործող «Օտարերկրյա գործակալների գրանցման ակտն» է: Դրդաստանում օտարերկրյա գործակալների մասին օրենքն ընդունվել է դեռ 2014 թվականին, սակայն դրա կիրառումը ժամանակավորապես կասեցված էր: Այս տարվա մարտին, սակայն, երկրի խորհրդարանը հաստատեց օրինագիծը, ըստ որոշ տվյալների, առանց բանավեճի և ընդամենը յոթ րոպեում: Ապրիլին Դրդաստանի նախագահ Սադիր Չապարովը ստորագրեց վիճահարույց օրենքը, որը ևս նմանեցվում է ռուսական «օտարերկրյա գործակալների մասին» օրենքին: Վրաստանում իշխող «Վրացական երազանք» կուսակցությունը օտարերկրյա գործակալների մասին օրենսդրական նախաձեռնությամբ հանդես եկավ 2023 թվականին, սակայն բախվեց զանգվածային բողոքի ակցիաների: Արդյունքում՝ օրինագիծը հետ կանչվեց, սակայն հաջորդ տարի՝ այս ապրիլին Վրաստանի խորհրդարանի մեծամասնությունը կրկին սեղանին դրեց օրինագիծը: Երկրի նախագահ Սալուսե Չուրաբիշվիլին մայիսի 18-ին վետո կիրառեց խորհրդարանում անցած օրինագծի նկատմամբ, սակայն, ինչպես սպասվում էր, իշխող «Վրացական երազանքը» հաղթահարեց այն և մայիսի 28-ին ընդունեց օրենքը: Օրենքը պաշտոնապես կոչվում է «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին օրենք», սակայն քննադատներն այն անվանել են «ռուսական օրենք»՝ նկատի ունենալով ռուսաստանյան նմանատիպ օրենքը:

Քաղաքական ճգնաժամի պատճառներն այնուամենայնիվ չանհետացան, քանի որ երկիրը աստիճանաբար հրաժարվում է Եվրամիությանն ինտեգրվելու իր ուղուց և վերակողմնորոշվում է դեպի Ռուսաստան:

Հակաեվրոպական միտումները շաղկապված են երկրում ներքաղաքական հակամարտությունների հետ: Վրաստանի ներքին քաղաքականությունը պտտվում է իշխող ռեժիմի և մասնատված արևմտամետ ընդդիմության առնակատման շուրջ: Երկու քաղաքական բևեռներն էլ ունեն հանրային աջակցություն: Վրացական հասարակության մի զգալի հատված սարսափում է ուկրաինական սցենարից և աջակցում է իշխող քաղաքական ուժին և նրա քաղաքականության մեջ տեսնում է երկրի կայունության գրավականը: Իշխող կուսակցությունը կանգնած է երկրնտրանքի առաջ՝ ինչպես մնալ իշխանության դեկին և միևնույն ժամանակ իրականացնել եվրոպական ինտեգրման համար անհրաժեշտ ժողովրդավարական բարեփոխումները:

Հակառակ թևում, արևմտյան հաստատություններից և դրամաշնորհներից սնվող հազարավոր հասարակական կազմակերպություններն են՝ քաղաքացիական հասարակությունը, որը ձգտում է դեպի Եվրոպա և պահանջում է բարեփոխումներ: Այս թևի առաջնորդը Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին է: Ընդդիմությունը համոզված է, որ 2024 թ. նախընտրական քարոզարշավի հաջողությունն ապահովելու համար, օտարերկրյա գործակալների մասին իշխանության աղմկահարույց օրինագիծը նպատակ ունի հսկողության տակ պահել ՀԿ-ները և լրատվամիջոցները:

Քաղաքական շրջանակներից և մեդիա դաշտից «Վրացական երազանք»-ի քննադատները գտնում էին, որ Թեբիլիսիում ընդօրինակում են Հունգարիայի վարչապետ Վիկտոր Օրբանին<sup>2</sup> և հետաձգում են դեպի ԵՄ շարժման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ բարեփոխումները: Արդյունքում Վրաստանի ղեկավարությունը հեռանում է Արևմուտքից, սակայն գովասանքի է արժանանում Ռուսաստանի կողմից: Միաժամանակ «Վրացական երազանքին» և նրա հիմնադիր միլիարդատեր Բիձինա Իվանիշվիլիին մեղադրում են երկիրը ռուսական ազդեցության ուղեծիր վերադարձնելու միտումնավոր փորձի մեջ: Հասկանալի է, որ իշխող կուսակցությունը այլ շարժառիթ ունի՝ ուժեղացնել իր ավտորիտար վերահսկողությունը

երկրի վրա, պատրաստվել 2024 թվականին կայանալիք խորհրդարանական ընտրություններին՝ չորրորդ ժամկետով իշխանության դեկին մնալու ակնկալիքով:

Առաջիկա ընտրություններում խաղաղություններն իսկապես մեծ են: «Վրացական երազանք»-ը մտավախություն ունի, որ ներկայիս ընդդիմությունը, եթե զա իշխանության, կսկսի հաշվեհարդար տեսնել իրենցից, նախկին քաղաքականության համար [4]: Եվ այս մտավախություններն անհիմն չեն: Վրաստանում յուրաքանչյուր իշխանափոխություն ուղեկցվել է նախորդ ղեկավարության նկատմամբ քաղաքական ռեպրեսիաներով: Ընդդիմության կարծիքով իշխանությունը կորցնելու վախը պատրվակ է դարձել ավտորիտար վարքագծի համար: Բայց խնդիրը իսկապես կա, այն էլ համակարգային: Դա կարող է լուծվել միայն այն դեպքում, եթե փոխվեն իշխանություն-ընդդիմություն հարաբերությունները:

Վրաստանի եվրոպական ապագան դարձել է իշխանության համար ներքաղաքական պայքարի առարկա: «Վրացական երազանքը» մարտավարական նկատառումներից ելնելով 2023 թ. հրաժարվեց այդ օրինագծից, բայց կուսակցության ներկայացուցիչները շարունակում էին պաշտպանել իրենց նախաձեռնության նշանակությունը՝ դիմելով պահպանողական հռետորաբանության, որը հենվում է նաև վրաց եկեղեցու հեղինակության վրա: Ազդարարվում էր, որ Վրաստանի ղեկավարությունը չի հրաժարվում ԵՄ-ին ինտեգրվելու ծրագրերից, այլ փորձում է այդ նպատակին հասնել իր պայմաններով, որպեսզի չվտանգի երկրի անվտանգությունը: Ռուսաստանը դրական արձագանքեց այս մոտեցմանը, բայց վրացական հասարակության արմատական տրամադրված արևմտամետ հատվածը և Եվրամիության ղեկավարները վճռականորեն հակադարձեցին իրավիճակը փոխելու նպատակով: Այս իրադարձությունները ստիպեցին «Վրացական երազանքին» ավելի զգույշ և իրականության հետ համահունչ մարտավարություն որդեգրել [5]:

Արտասահմանյան գործակալների մասին օրինագծի նկատմամբ Վրաստանի գրեթե բոլոր արևմտյան գործընկերների կտրուկ արձագանքը ցույց տվեց, որ եվրոպական ինտեգրումը չի կարող գուգակցվել այդպիսի ոճով իշխանության ամրապնդման հետ: Իսկ զանգվածային բողոքի ցույցերը վկայություն դարձան, որ վրաց հասարակության արևմտամետ հատվածը, բավականին մարտականորեն, պատրաստ է պաշտպանել երկրի եվրոպական ապագան: Անցած տարի «Վրացական երազանքը» կարող էր փոխել իր մարտավարությունը, զբաղվել եվրոպամետ բարեփոխումներով և 2024 թվականի ընտրություններում հաղթելու համար իր կողմը

<sup>2</sup> Ժողովրդավարությունից նահանջող Օրբանին Բրյուսելում քննադատում են, որ նա համակարգված մարզինալացնում է բոլոր հիմնական ընդդիմադիր կուսակցություններին և միևնույն ժամանակ ստեղծելով հավատարիմ իշխանամետ լրատվամիջոցներ, ուժեղացնում է վերահսկողությունը իշխանության բոլոր ճյուղերի վրա:

գրավել արևմտամետ ընտրագանգվածը: Բյուրսելից գգուշացնում են, որ եթե իշխանությունը գնա ավտորիտար ուղիով, երկիրը կտանի պերմանենտ ճգնաժամերի ճանապարհով, որի հետևանքը կլինի ներքին ապակայունացումը: Արևմտյան կենտրոններից եկող այս նախագգուշացումները հետևանք էին ռուսական ազդեցության վերականգնման լուրջ մտահոգությունների, որովհետև շատ սուր էր ռուսական բացասական արձագանքը [6] արևմտամետների բողոքական շարժման և հակաիշխանական ցույցերի նկատմամբ: Գաղտնիք չէ, որ Ռուսաստանի ներկա իշխանությունների արտաքին քաղաքական ռազմավարության գերնպատակը ազդեցության վերականգնումն է հետխորհրդային տարածությունում, որն Արևմուտքում համարում են կայսերական հավակնություններ: Հատկապես ցավազին է ընդունվում Վրաստանի և Եվրամիության ընդհանուր հարևանության մյուս երկրների վրա ռուսական ազդեցության վերականգնման սցենարը: Այս առումով Վրաստանի առջև իսկապես բարդ խնդիր է դրված՝ նվազագույնի հասցնել ռուսական ռազմական միջամտության ռիսկերը և միևնույն ժամանակ չկորցնել արևմտյան հովանավորչությունը և եվրոինտեգրման ուղին: Այս հարցում ԵՄ-ն և Միացյալ Նահանգները փորձում են առանցքային դեր խաղալ, կանխել Վրաստանի հեռացումը և զսպել ռուսական հնարավոր ճնշումները:

Դրան հակառակ, արձագանքելով 2023 թ. իրադարձություններին, ռուսական պաշտոնական շրջանակները վրացական հակաիշխանական ցույցերը անվանում էին հեղաշրջման փորձ և մեղադրում Արևմուտքին դրանց կազմակերպման մեջ [6]: Անցած տարի Եվրամիությունը կանգնած էր բարդ երկրնտրանքի առաջ՝ Վրաստանին ԵՄ անդամակցության թեկնածուի կարգավիճակ տալ մինչև 2024 թվականի ընտրությունները, թե՛ դրանից հետո: Վրացական ընդդիմությունը շտապեցնում էր, որովհետև մտավախություն ուներ, որ այդ կարգավիճակի ձգձգումը միայն կխրախուսի իշխող կուսակցությանն իր ավտորիտար նկրտումներում և կամրապնդի երկրի ներկայիս օլիգարխիկ ղեկավարության դիրքերը: Սակայն թեկնածուի կարգավիճակ ստանալու համար, պարտադիր է ԵՄ 12 հանձնարարականների [7] իրականացումը, որոնք նախատեսում են Իվանիշվիլի իշխանության համար վտանգավոր և աննպաստ ապաօլիգարխացում:

Բյուրսելն էլ իր մտավախություններն ունի: Եթե նա Վրաստանին թեկնածուի կարգավիճակ չտա մինչև 2024 թվականի ընտրությունները, եվրասկեպտիկների դիրքերը երկրում կամրապնդվեն, Ռուսաստանը կընդլայնի իր ազդեցությունը, բարեփոխումների կողմնակիցները

կթուլանան, և իշխող կուսակցությունը դա կարող է ընկալել որպես քարտ բլանշ՝ ավելի սեղմելու համար պտուտակները: Մինչդեռ կարգավիճակի շնորհումը Վրաստանին կպահի ԵՄ աշխարհաքաղաքական ուղեծրում, կնպաստի տարածաշրջանում ռուսական դիրքերի թուլացմանը:

Արևմտյան փորձագիտական շրջանակներում մեծամասամբ գտնում են, որ կարգավիճակ տալը բավականին ռիսկային քայլ է: Նույնիսկ եթե բարոյական նկատառումները մի կողմ դրվեն, դժվար կլինի համոզել ԵՄ երկրներին անտեսել Վրաստանի շարժը դեպի ավտորիտարիզմ: Անցած տարի առաջարկվում էր ռազմավարական համբերություն ցուցաբերել և Վրաստանին թեկնածուի կարգավիճակ տալու համար սպասել ավելի լավ ժամանակների: Ամեն դեպքում, Բյուրսելում սեփական աշխարհաքաղաքական շահերը հարգելու և ձևավորվող վրացական ավտորիտարիզմը չեզոքացնելու լուծումներ էին մշակվում: Միությանը միանալու 1993 թ. Կոպենհագենյան չափանիշներին [8] համապատասխանելիության հրամայական պահանջները անփոփոխ են: ԵՄ ղեկավարները Թրիլիսիին անընդմեջ առաջարկում են իրականացնել 12 առաջարկությունները, հասկանալով որ ի վերջո, Արևմուտքի ազդեցությունը վտանգված է ոչ միայն Վրաստանում, այլև ողջ տարածաշրջանում:

Անհրաժեշտ է նշել նաև, որ Վրաստանում բավականին երկար ժամանակ, աստիճանաբար ավելացել է վատատեսությունը Արևմուտքի հանդեպ: Վրաց հասարակությունը համբերատարությամբ սպասել է, հույս ունենալով, որ կստանա ԵՄ-ին և ՆԱՏՕ-ին անդամակցություն, որը դեռևս մնում է օդում կախված և հիասթափություն է առաջացրել հանրության շրջանում: Ուստի պատահական չէր Սահակաշվիլու պարտությունը ռուսական միջավայրում ձևավորված օլիգարխի Իվանիշվիլու քաղաքական ուժից: Այսօր երկրի ստվերային ղեկավարը Մոսկվայի հետ քսանամյա թշնամության հաղթահարմամբ առավել ցցուն տեղաշարժ է սկսել դեպի չեզոք դիրքեր, Իվանիշվիլիի «Վրացական երազանք» կուսակցության կառավարությունը նախկին վարչապետ Ղարիբաշվիլու ղեկավարությամբ, չնայած հսկայական ճնշումներին չմիացավ ՌԴ դեմ կիրարկվող պատժամիջոցներին և ընդամազ էր գնում վրաց-ռուսական հարաբերությունների կարգավորման ուղիով: Արևմուտքը, խրված ուկրաինական պատերազմի մեջ, ստիպված էր վրաց-ռուսական մերձեցումը կանխել, երկրում ստեղծված արևմտամետ հասարակական կազմակերպությունների խիտ ցանցի և նախագահ Մալոմե Չուրաբիշվիլիի ակտիվացմամբ: Այդ նպատակով էր, որ Եվրոպական խորհուրդը

ղեկտեմբերին Վրաստանին ԵՄ թեկնածուի կարգավիճակ տրամադրելու մասին որոշում կայացրեց: Չնայած դրան 2023 թ. ստեղծվեց քաղաքացիական պատերազմի սպառնալիք: Փաստացիորեն երկու քաղաքական խմբավորումներ, միմյանց հակասող իրենց արտաքին քաղաքական դիրքորոշումներով երկիրը բաժանեցին երկու բևեռների: Ամբողջ տարվա ընկալմամբ հաճախակիացել էին արևմտյան գրանտակեր կառույց ՀԿ-ների և ոստիկանության բախումները [9]: Եվ ինչպես նշեցինք, վրացական իշխանությունները ստիպված էին ժամանակավորապես խորհրդարանի օրակարգից հանել հասարակական կազմակերպությունների գործունեության վերահսկողությանը միտված արտասահմանյան գործակալների մասին օրինագիծը, որն իհարկե լուրջ հարված էր վարչապետ Ղարիբաշվիլիի հեղինակությանը:

**Ներքաղաքական նոր զարգացումները 2024 թ.-ին: Կրկնակի ռիսկը և օրինագծի ընդունումը: Եվրոպական ապագայի ճակատագիրը:** 2024 թ. սկզբից ի վեր, ներքաղաքական պայքարը Վրաստանում շարունակում է սրվել: Փետրվարի 8-ին, 11 ժամ տևած սուր քննարկումներից և բախումներից հետո խորհրդարանը հաստատեց նոր կառավարության կազմը, Իրակլի Կոբախիձեի վարչապետությամբ [10]: Նոր վարչապետը և իշխող քաղաքական ուժի փաստացի ղեկավարը նորից անցան վճռական գործողությունների և օրենքը ընդունվեց: Ինչպես նշեցինք ծանոթագրության մեջ երկրի նախագահ Սալոմե Չուրաբիշվիլին մայիսի 18-ին վետո կիրառեց խորհրդարանում անցած օրինագծի նկատմամբ, սակայն, ինչպես սպասվում էր, իշխող «Վրացական երազանքը» հաղթահարեց այն և 2024 թ. մայիսի 28-ին վերջնականապես հաստատվեց «Օտարերկրյա ազդեցության թափանցիկության մասին օրենքը»: Դրանից հետո քաղաքագիտական հանրությունը փորձում է կանխատեսել այս իրադարձության հնարավոր ազդեցությունը հոկտեմբերյան խորհրդարանական ընտրությունների արդյունքի վրա<sup>3</sup>:

<sup>3</sup> Վաշինգտոնն ու Բրյուսելը անմիջապես արձագանքեցին օրենքի ընդունմանը: ԱՄՆ պետքարտուղար **Էնթոնի Բլինքենը** հայտարարեց, որ Վաշինգտոնը պատժամիջոցներ է սահմանում «Վրաստանում ժողովրդավարությունը խաթարելու համար պատասխանատուների» նկատմամբ, նշելով որ «ԱՄՆ պետքարտուղարությունը Վրաստանի համար վիզաների սահմանափակման նոր քաղաքականություն է սահմանում, որը կտարածվի այն անձանց և նրանց ընտանիքի անդամներին վրա, ովքեր պատասխանատու են կամ մեղսակից են Վրաստանում ժողովրդավարության խաթարման համար: Դա ներառում է այն անձանց, ովքեր պատասխանատու են Վրաստանում քաղաքացիական հասարակությանը և խաղաղ հավաքների ազատությունը բռնաճնշելու համար՝ բռնության կամ ահաբեկման արշավի միջոցով», - ընդգծում է **ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը**: Օրենքի վերաբերյալ վրացական խորհրդարանի

2024 թ. «Վրացական երազանքը», որի հաղթանակը հոկտեմբերի ընտրություններում կասկած չէր հարուցում, այժմ լուրջ մարտահրավերների առջև է կանգնած: Այս քաղաքական ուժը 2024 թվականի սկզբին համարվում էր աշխարհ կայանալիք ընտրությունների անվիճելի առաջատարը: Ըստ 2023 թ. դեկտեմբերյան կանխատեսումների նա կարող էր ապավինել ձայների 36%-ին: Ամենամոտ ընդդիմադիր միավորումների վարկանիշը առավելագույնը 21 տոկոս էր [12]: Սակայն, այս անգամ խաղաղություններն ավելի բարձր են, ինչը նշանակում է, որ արդյունքը կարող է ավելի դրամատիկ լինել: 2024 թ. մայիսին Թբիլիսիում չէին հանդարտվում բողոքի ցույցերը քաղաքացիական կառույցների գլխավորությամբ օտարերկրյա գործակալների մասին օրենքը տապալելու համար: Իշխանությունները փորձում են մարել բողոքական շարժումը, հայտարարելով, որ ոչինչ չեն վտանգում եվրոպական ինտեգրման ճանապարհին և Եվրամիությունը չի գնա Վրաստանի նկատմամբ իր քաղաքականության կոշտացմանը, որովհետև 2023 թվականի վերջին **Վրաստանը, այնուամենայնիվ, ստացել է ԵՄ-ին անդամակցելու թեկնածու երկրի պաշտոնական կարգավիճակ**: Մինչդեռ Արևմուտքի կենտրոններում գտնում են, որ չորրորդ անգամ անընդմեջ առաջադրվող կուսակցության քաղաքականությունը դառնում է իռացիոնալ:

Ի վանիշվիլին և նրա քաղաքական թիմը այլ մոտեցում ունեն: Իրադրությունը նրանք բարենպաստ են համարում, հավատալով իրենց բարձր վարկանիշին և մասնատված ընդդիմությունը շատ ավելի քիչ ժողովրդականությանը: Այժմ իշխանավորների տրամաբանությունն այն է, որ օրենքի ընդունումը չի օտարի իրենց կողմնակիցներին: Մայիսին օրենքն ընդունվեց այն հույսով, որ մինչ ընտրությունները կրքերը կհանդարտվեն, վրդովմունքն էլ անցած կլինի: Նրանք դրսից սպառնալիքներ չեն սպասում, կարծում են, որ Բրյուսելն այժմ Թբիլիսիի համար

քվեարկությունից անմիջապես հետո ԵՄ-ն հայտարարեց. «Մա շատ վատ իրադարձություն է Վրաստանի և նրա ժողովրդի համար: Օրենքն իր ներկայիս տեսքով սպառնում է բացասական ազդեցություն ունենալ քաղաքացիական հասարակության և լրատվամիջոցների վրա ...: Այս օրենքը անհամատեղելի է ԵՄ արժեքների և չափանիշների հետ: Դա հակասում է Եվրամիությանն անդամակցելու Վրաստանի հայտարարած նպատակին, որին աջակցում է Վրաստանի քաղաքացիների ճնշող մեծամասնությունը: Դրա վերջնական ընդունումը կարող է լուրջ հետևանքներ ունենալ մեր հարաբերությունների համար», - հայտնել է **Եվրամիության արտաքին կապերի Եվրոպական ծառայությունը (EEAS)**: ԵՄ-ն արդեն հայտարարել է, որ նոր օրենքն անընդունելի է և խոչընդոտ կդառնա Վրաստանի եվրաինտեգրման համար: Ընդ որում, դա արել է անձամբ, Եվրոպական հանձնաժողովի ընդլայնման հարցերով գլխավոր տնօրեն **Հերա Յան Կուպմանը**, որը հատուկ մայիսի 1-ին ժամանեց Թբիլիսի [11]:

ժամանակ չունի և դժվար թե որևէ մեկը Վրաստանից խլի ԵՄ-ի թեկնածու երկրի նոր շնորհված կարգավիճակը, չնայած որ էքսվարչապետ Ղարիբաշվիլին քննադատության էր արժանացել Եվրոպական խորհրդարանի բավականին ազդեցիկ սոցիալիստների խմբակցության կողմից [13]: Իվանիշվիլին վստահ է նաև, որ «Երազանքի» հակառակորդները հաջողություն չեն ունենա, իսկ օրենքի ընդունումը կօգնի Վրաստանին պաշտպանել իր ինքնիշխանությունը, կայունությունը և թույլ չի տա երկիրը ներքաշել Ռուսաստանի հետ հակամարտության մեջ [14]: Դժվար է ասել, թե որքանով է արդարացված Իվանիշվիլի լավատեսությունը, որովհետև օրենքի հակառակորդների բազան շարունակում է աճել [15]: Նրա դեմ են արտահայտվել նույնիսկ որոշ հոգևորականներ, իսկ նախագահ Սալոմե Չուրաբիշվիլին շարունակում է ընդունել և հրահանգներ տալ ընդդիմադիր ցուցարարներին [16]:

Ներկա քաղաքական գործընթացներում կարևոր դեր է խաղում նաև նոր վարչապետ Իրակլի Կորբախիձեն: Կառավարության ղեկավարի պաշտոնում նրա նշանակումն առաջինն էր, ինչ արեց Իվանիշվիլին սովորից վերադառնալուց հետո: Կորբախիձեն, կոշտ քայլերի կողմինակից ամենահավակնոտ քաղաքական գործիչն է Վրաստանում: Իր քաղաքական կարիերայի ընթացքում Կորբախիձեն Ուկրաինային մեղադրել է Վրաստանին Ռուսաստանի հետ պատերազմի մեջ ներքաշելու փորձի մեջ, դեմ է արտահայտվել ԼԳԲՏ քարոզչությանը և հակառակորդների դեմ պայքարում կիրառել է բոլոր միջոցները: «Վրացական երազանքի» նախագահի պաշտոնը զբաղեցնելիս նա եռանդուն պաշտպանում էր օտարերկրյա գործակալների մասին օրենքը: Այժմ, ստանալով վարչապետի պաշտոնը, Կորբախիձեն որոշել է ցույց տալ, որ բավական ինքնավստահություն ունի իր սկսածը ավարտին հասցնելու համար: Նա նույնիսկ մերժեց Վաշինգտոն այցելելու հրավերը, քանի որ ամերիկացիները պահանջում էին դադարեցնել նոր օրենքի ընդունման գործընթացը:

Հավաքական Արևմուտքը չի հավատում վրացական իշխանությունների հավաստիացումներին և պաշտոնական վարկածին, թե օրենքի նպատակը հանրային կյանքում թափանցիկության բարձրացումն է և չի վնասի եվրաինտեգրմանը<sup>4</sup>: Արևմուտքի առաջնորդների կարծիքով

հետխորհրդային տարածքում նման բոլոր նախաձեռնությունները միայն հանգեցրին իրավունքների և ազատությունների հետ կապված իրավիճակի վատթարացման: Այդպես էր Ռուսաստանում և այժմ նման իրավիճակ է նկատվում ժամանակին ժողովրդավարական պետություն համարվող Ղրղզստանում: Սակայն այս երկրների և Վրաստանի միջև կարևոր տարբերությունն այն է, որ վրացական Սահմանադրության մեջ ամրագրված է Եվրամիությանն անդամագրվելու պարտավորությունը: «Վրացական երազանքի» կողմից օրենքը նորից չեղարկելը նշանակում է ավելի մեծ նվաստացում ապրել, քան մեկ տարի առաջ, իսկ չչեղարկելը վտանգում է երկրի եվրոպական ապագան և դրա հետ մեկտեղ մեծացնում է նոր գունավոր հեղափոխության վտանգը, ինչպես եղավ երկրորդ Մայդանը Կիևում:

Վրաստանի ներքաղաքական գործընթացները նշանավորվեցին շատ յուրահատուկ «արտաքին միջամտությամբ», որի մասին էր մասնավորում մեր արձագանքը. «*Լիտվայի, Իսրայելի և Էստոնիայի արտաքին գործերի նախարարները եկել են Վրաստան և Թբիլիսիում մասնակցում են ընդդիմության հանրահավաքներին: Միտինգի ժամանակ երկրի է ունեցել Լիտվայի ԱԳ նախարար Լանդաբերգիսը: Սա բացառիկ իրողություն է, երբ մի քանի երկրների արտգործնախարարներ մասնակցում են մեկ այլ երկրի քաղաքական/հակա-իշխանական գործողություններին: Հասկանալի է, որ այս բարձրաստիճան պաշտոնյաները նման քայլի դիմել են ոչ թե գաղտնի և սեփական նախաձեռնությամբ, այլ նրանց գործուղել են: Եվրոքյուրկրատիան փայլում է իր ոչ ստանդարտ գործունեությամբ: Վրաստանի դրեֆթը Արևմուտքից դեպի Ռուսաստան, շատ հիվանդագին է ընդունվում Բրյուսելում և Վաշինգտոնում, «եվրաինտեգրման դռները փակվում են Վրաստանի համար», բարձրաձայնում են արևմտյան բոլոր քաղաքական լիդերները: Հակառակ դրան Իվանիշվիլիի քաղաքական թիմը առանց վարանելու շարունակում է իր գիծը, առանց որևէ զիջումների, արտահանական գործակալների մասին օրենքն արդեն ընդունված է: Բացառված չէ, որ վրացիներին ոգևորելու համար, Աբխազիայի և Հարավային Օսիայի հարցով Մոսկվան գրավիչ առաջարկներ է արել: Ուկրաինական պատերազմի համատեքստում, որտեղ Պուտինը որդեգրել է երկարատև և հյուժիչ պատերազմի տակտիկան, սա շատ անհանգստացնող իրավիճակ*

<sup>4</sup> Օգոստոսյան պատերազմի 16-րդ տարեկիցի կապակցությամբ ԱՄՆ նախագահ Ջո Բայդենը նամակ է հղել Վրաստանի նախագահ Սալոմե Չուրաբիշվիլիին: Բայդենն ընդգծել է՝ Միացյալ Նահանգները շարունակում է մնալ Վրաստանի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության հաստատուն ջատագովը: Նույն նամակում ԱՄՆ նախագահը քննադատել է Վրաստանի կառավարությանը՝ նշելով, որ հիատախափված է «հակաժողովրդավարական գործողություններից, մասնավորապես «Կրեմլի օրինակով

օտարերկրյա գործակալների մասին օրենքի ընդունումից և վրաց պաշտոնյաների կեղծ հայտարարություններից»: «Ղեկը է ընդգծել վրաց ժողովրդի հատակ կանքը, որը շարունակում է արտահայտել եվրո-ատլանտյան ձգտումները: Միացյալ Նահանգները ողջունում է Վրաստանի քաղաքացիների անսասան նվիրվածությունը ժողովրդավարական ապագային, որում քաղաքացիական հասարակությունը կարևոր ներդրում ունի», - ասված է նամակում [17]:

է Արևմուտքի համար» [18]: Այս հանգամանքն էր ռուսական կողմի ակտիվության պատճառը, ռուս բարձրաստիճան պաշտոնյաներ և մերձկրեմլյան լրատվամիջոցներ այս մեկ տարվա ընթացքում սկսել են շրջանառել ՌԴ-Վրաստան դիվանագիտական կապերի վերականգնման և առանց հրավերների քաղաքացիների տեղաշարժի ռեժիմը վերականգնելու անհրաժեշտությունը [19]:

Ամեն դեպքում քարոզչական պայքարը շարունակվում է և ավելի է սրվում վրացական ընտրություններին ընդառաջ: Օգտագործվում են բոլոր հարթակները ԱՄՆ կոնգրեսից սկսած, վրացական ՀԿ-ներով վերջացրած: Օրինակ, ԱՄՆ Կոնգրեսի Հելսինկյան հանձնաժողովի ճեպագրույցին մասնակցած փորձագետները նշել են, որ «Օտարերկրյա գործակալների» մասին ռուսական ոճի օրենքները ոչնչացնում են քաղաքացիական հասարակությունը [20]: Նրանք մատնանշում են նաև արևմտյան արժեհամակարգի համար անցանկալի այլ նախաձեռնություններ: Օրինակ, Վրաստանի իշխող կուսակցությունը նախաձեռնում է փոփոխություններ Սահմանադրության մեջ՝ կապված ընտանեկան արժեքների հետ: «Մենք պետք է պաշտպանենք ընտանեկան արժեքները և մեր սպառաձեռնողները կեղծ-ազատական քարոզչության անուղղելի հետևանքներից, հետևաբար, մենք որոշեցինք նախաձեռնել փոփոխություններ Սահմանադրության մեջ, որոնք հաստատեն կահմաններն ընտանեկան արժեքների և անհատիկության պաշտպանության երաշխիքները, որից հետո մոտ սպազայում մենք նույնպես կնախաձեռնենք ավելի կոնկրետ փոփոխություններ օրենքներում»,- ասել է «Վրացական երազանքի» գործադիր քարտուղար Մամուկա Մոխիարաձեն [21]: Արևմտամետ վրացական ընդդիմության մի զգալի հատված, որի մեջ առանցքային դերակատարում ունի նախկին իշխանության՝ Սահակաշվիլու «Միասնական Ազգային շարժում» կուսակցությունը, հրաժարվեց մասնակցել քննարկումներին: FREEDOM հեռուստաալիքի ուղիղ եթերում Վրաստանի կրթության, այնուհետև պաշտպանության նախկին նախարար, «Միացյալ ազգային շարժում» կուսակցության անդամ Դմիտրի Շաշկինը մեկնաբանել է երկրում ստեղծված իրավիճակը: Նրա խոսքով՝ Մաքարթվելոյի համար փակ է դեպի ԵՄ ճանապարհը և պետությունը դարձնում են ռուսական գավառ: Ավելին, նա նշել է, որ Կրեմլը փորձում է իր շուրջ ստեղծել դաշնակիցների օղակ, որի առավել թույլ հատվածը Վրաստանն է, քանի որ վրացիների մեծամասնությունը հաստատել է ԵՄ-ի հետ լինելու իր ցանկությունը [22]:

Արևմտամետ/ընդդիմադիր շրջանակներում վրացական իշխանությունների գործունեությունը որակում են հակազգային և հակապե-

տական: Մեջ բերենք Վրաստանի ընդդիմության գործիչներից մեկի հայտարարությունը. «Եթե հոկտեմբերին չփոխենք իշխանությունը, սպա վիզային ռեժիմը վերացվի, կարգավիճակը կդադարեցվի, հնարավոր է նաև ազատ առևտուրը: Վրաստանը Ռուսաստանի հետ միասին կհայտնվի մեկուսացված տնտեսական տարածքում»,- ասել է պատգամավոր Սալոմե Սամադաշվիլին՝ ի պատասխան Վրաստանում ԵՄ դեսպան Պավել Գերշինսկու հայտարարության [23]: Գերշինսկին նշել էր, որ «Վրաստանի ներկայիս կառավարության մտադրությունները անհասկանալի են Եվրամիության դեկավարների համար: Օտարերկրյա ազդեցության թափանցիկության օրենքը ակնհայտորեն հետրոց է: Նաև հակաարևմտյան, հակաեվրոպական հռետորաբանությունը լիովին անհամատեղելի է Եվրամիությանն անդամակցելու հռչակված նպատակին: Ցավոք, այս պահին Վրաստանի անդամակցությունը Եվրամիությանը՝ կասեցված է» [24]: Իսկ դրա պատասխանը իշխանությունից հետևյալն էր. «Մտացվում է, որ Եվրոպան ու ԱՄՆ-ն մեզ այնքան դաշնակից են համարում, որ պատրաստ են մեզ թողնել մեր ճակատագրին, միայն այն պատճառով, որ իրենց գրպանային ընդդիմությունն իր անարժեքության պատճառով կրկին տապալելու է ընտրությունները: Այժմ պարզ է դառնում վրացի պաշտոնյաների հաճախակի այցերը Չինաստան. իշխող կուսակցությունը փնտրում է իսկապես ռազմավարական գործընկերներ, որոնք չեն լքի երկիրը կես ճանապարհին» [24]:

Վրաստանի հարցում Արևմուտքում միասնական դիրքորոշում է կարծրացել: Հետևելով գերմանացիներին և ամերիկացիներին՝ ֆրանսիացիները հրաժարվեցին ուղղակիորեն ֆինանսական օգնություն տրամադրել Վրաստանին. «Եվրոպական խորհուրդը եկել է այն եզրակացության, որ Վրաստանի՝ Եվրամիությանն անդամակցելու ճանապարհը դե ֆակտո կասեցված է: Սա Վրաստանի կառավարության ընդունած որոշումների արդյունքն է, որի մասին բոլորը գիտեն: Այդ իսկ պատճառով մենք որոշել ենք ժամանակավորապես դադարեցնել մեր անմիջական օգնությունը Վրաստանի բյուջեին և ավելացնել քաղաքացիական հասարակությանն ու ՉԼՄ-ներին տրամադրվող օգնությունը»,- ասել է Վրաստանում Ֆրանսիայի դեսպան Շերագ Ղարին [25; 26]:

Ավելի պարզ ասած Իվանիշվիլի/Կոբախիձե տանդեմին հղվում էր այս ուղերձը. դուք հրաժարվում եք համաձայնվել մեր պայմաններին, ուստի մենք հովանավորելու ենք արմատական ընդդիմությանը և լրատվամիջոցներին՝ հասարակությանը իշխանության դեմ հանելու համար: Իհարկե, արևմտյան օգնության դադարեցումը վրաց հասարակության մեջ զարկ տվեց ավելի արմատական/ազգայնական շրջանակների ակտիվացման: Մամուլում և հանրային

քաղաքականության մեջ շրջանառվող կարծիքների համաձայն Վրաստանը պարզապես ոտքի կանգնեց, պաշտպանելու իր ազգային շահերը, իր ավանդույթներն ու արժեքները, հրաժարվեց կորցնել իր ինքնությունը, և հենց դրա համար է նրան պատժում Արևմուտքը: Մինչդեռ քաղաքագիտական կենտրոններում բավականին տարածված է այն տեսակետը, որ ներքաղաքական գործընթացները Վրաստանում ուկրաինական պատերազմի անմիջական արդյունքն են: Օրինակ, Մերձավոր Արևելք-Կովկաս հետազոտական կենտրոնի տնօրեն Ստանիսլավ Տարատովը մեկնաբանելով Վրաստանի եվրաինտեգրման կասեցումը նշում է, Վրաստանը փոխում է կուրսը «ուկրաինացումից» խուսափելու և գիտակցաբար շրջվում է արևմտամետ կուրսից՝ Ուկրաինայի ճակատագրին չարժանանալու համար [27]: Փորձագետը կարծում է, որ Վրաստանի կառավարությունը նախատեսում է համագործակցել Իրանի, Չինաստանի, Ռուսաստանի և Թուրքիայի հետ, մասնակցել «Հյուսիս-Հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի աշխատանքներին, որը պետք է թույլ տա Վրաստանին «օգտագործել տարանցիկ հնարավորությունները և ստանալ շահաբաժիններ», ճանապարհ հարթել «միլիոնավոր վրացիների համար նորոպ սարելու և բարգավաճ երկիր լինելու, զարգացնելու գյուղատնտեսությունը և գրոսաշրջության բիզնեսը և իրեն բավականաչափ վստահ զգալ»[27]:

**Եզրակացություն**

Մեր հրապարակված կարծիքի համաձայն [28] Վրաստանին ցուցաբերվող օգնության դադարեցումով և հնարավոր պատժամիջոցներով փաստացիորեն Վրաստանը կտրվում է արևմտյան ազդեցության գոտուց, չնայած որ ստացել է ԵՄ անդամության թեկնածուի կարգավիճակ: Իհարկե դեռ վաղ է այս առումով վերջնական եզրահանգումներ անել, որովհետև հոյտեմբերին սպասվող ընտրությունների արդյունքները միայն կհաստակեցնեն իրավիճակը: Համոզված եմ, որ ԵՄ-ն և ԱՄՆ-ն իրենց հասանելի բոլոր միջոցներով և լծակներով աշխատելու են Իվանիշվիլիի «Վրացական Երագանք» քաղաքական կուսակցության պարտությանը նպաստելու համար: Իսկ որն է վերջինիս «մեղքը»: Հիմնականը՝ ՌԴ դեմ կիրառվող պատժամիջոցներին չմիանալը և բացարձակ պասիվությունը ուկրաինական ճակատում, չնայած որ որպես պատճառ շրջանառվում է օտարերկրյա ֆինանսավորմամբ ՀԿ-ներին վերահսկողության դաշտ բերելու օրենքը: Այս հանգամանքը անմիջականորեն ազդելու է Հայաստանի շուրջ ընթացող քաղաքական գործընթացների վրա: Բրյուսելն ու Վաշինգտոնը առավել համառ և առավել մեծ ռեսուրսներով են աշխատելու Հայաստանի, դեպի արևմտյան ազդեցության

գոտի տեղաշարժը ապահովելու համար: Իմ դիտարկմամբ, Մոսկվայի ղեկավար այրերը առայժմ վերջնական որոշում չունեն Հարավային Կովկասի և մասնավորապես Հայաստանի մասով: Այն պարզ կլինի միայն ուկրաինական պատերազմի ավարտից հետո: Այն հավանաբար տեղի կունենա այս տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, վրաց վարչապետ Կոբախիձեն նշեց 2025 թ. գարունը, առայժմ շատ բան պայմանավորված է ԱՄՆ նախագահական ընտրությունների արդյունքներով:

**Օգտագործված աղբյուրներ և էլ. ռեսուրսներ**

1. «Օտարերկրյա գործակալները»՝ տարբեր երկրներում. ՏԵՂորոշում, 16 Օգոստոս, 2024, <https://goo.su/lewKp> (հղումը կրճատված է; դիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
2. **Paul Kirby**, Georgia drops 'foreign agents' law after protests // BBC Home - Breaking News, World News, US News... 9 March 2023 <https://www.bbc.com/news/world-europe-64899041> (դիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
3. **Faustine Vincent**, Gen Z Georgians push back against 'foreign agents' law // Le Monde in English – World news, culture and opinion. March 13, 2023 [https://www.lemonde.fr/en/international/article/2023/03/13/gen-z-georgians-push-back-against-foreign-agents-law\\_6019128\\_4.html](https://www.lemonde.fr/en/international/article/2023/03/13/gen-z-georgians-push-back-against-foreign-agents-law_6019128_4.html) (դիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
4. **Kornely Kakachia, Shota Kakabadze**, What's Behind Georgian Dream's Anti-Western Rhetoric and Foreign Policy Behavior // GIP | GEORGIAN INSTITUTE OF POLITICS. 12-09-2022 <https://goo.su/5plGLsz> (հղումը կրճատված է; դիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
5. EU condemns Georgia's 'foreign agents' law as protest continue // Euractiv – News & EU policy from Europe, for Europe. 8.03.2023 <https://goo.su/FYenr> (հղումը կրճատված է; դիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
6. Russia casts Georgia protests as coup attempt, accuses West of fomenting unrest // France 24 - International breaking news, top stories and headlines. 10/03/2023 <https://www.france24.com/en/europe/20230310-russia-casts-georgia-protests-as-coup-attempt-accuses-west-of-fomenting-unrest> (դիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
7. Վրաստանի ԵՄ անդամակցության հարցեր և պատասխաններ, [https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/qanda\\_22\\_3800](https://ec.europa.eu/commission/presscorner/detail/en/qanda_22_3800) (դիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
8. «Presidency Conclusion Copenhagen European Council - 21-22 June 1993» [http://www.europarl.europa.eu/enlargement/ec/pdf/co\\_p\\_en.pdf](http://www.europarl.europa.eu/enlargement/ec/pdf/co_p_en.pdf) (դիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
9. **Գարիկ Քեռյան**, Կարծես թե սրվում է պայքարը Վրաստանի համար // ռ.pecypc Facebook, 26.05.2023 <https://goo.su/uexPMY9> (հղումը կրճատված է; դիտման ամսաթիվը՝ 18.09.2024).



10. Парламент Грузии объявил вотум доверия обновленному правительству во главе с Кобахидзе // эл.ресурс Newsgeorgia 8.02.2024 <https://www.newsgeorgia.ge/parlament-gruzii-objavil-votum-doverija-obnovlennomu-pravitelstvu-vo-glave-s-kobahidze/> (ղիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
11. Генеральный директор Еврокомиссии по вопросам соседства и расширения посещает Грузию // эл.ресурс Civil Georgia, 05.02.2024 <https://civil.ge/ru/archives/602914> (ղիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
12. 90% граждан Грузии уверены в необходимости тесных связей с ЕС - исследование Edison Research // эл.ресурс JAM news, 30.12.2023 <https://goo.su/D1uIN> (հղումը կրճատված է; ղիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
13. Garibashvili CPAC intervention contravenes European and progressive values // эл.ресурс PES socialists & democrats, 4.05.2023 <https://pes.eu/pes/garibashvili-cpac-contravenes-european-progressive-values/> (ղիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
14. Бидзина Иванишвили поддерживает антизападную политику и угрожает репрессиями // эл.ресурс Civil Georgia, 29.04.2024 <https://civil.ge/ru/archives/602375> (ղիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
15. «წინააღმდეგობაშია კონსტიტუციასთან და ქრისტიანულ მოძღვრებასთან» — მთავარეპისკოპოსი „რუსულ კანონზე“ // эл.ресурс @netgazeti.ge, 24.05.2024 <https://netgazeti.ge/opinion/719613/> (ղիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
16. Instagram Salome Zourabichvili, 30.05.2024 [https://www.instagram.com/p/C6Y29GXiN-R/?hl=en&img\\_index=1](https://www.instagram.com/p/C6Y29GXiN-R/?hl=en&img_index=1) (ղիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
17. «Գործակալների մասին» օրենքը հակաժողովրդական քայլ է. Բայդեն // эл.ресурс 168.am, 10.08.2024 <https://goo.su/vFUC2Zg> (հղումը կրճատված է; ղիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
18. **Գարիկ Քեռյան**, Լիտվայի, Իսրայելի և Էստոնիայի արտաքին գործերի նախարարները Թբիլիսիում մասնակցում են ընդդիմության հանրահավաքներին // эл.ресурс generalnews.am, 16/05/2024 <https://generalnews.am/hy/article/f4019657a0c073ede70a1289e3583b2a> (ղիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
19. Москва-Тбилиси: визовый режим в контексте двусторонних отношений // эл.ресурс 18.06.2024 <https://www.golosameriki.com/a/georgia-russia-visa-regime/7660597.html> (ղիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
20. Эксперты: Законы российского образца об «иноагентах» разрушают гражданское общество // эл.ресурс Telegram - kanal GolosAmeriki, 22.06.2024 <https://goo.su/ZIpGT5> (հղումը կրճատված է; ղիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
21. Правящая партия Грузии инициирует поправки в Конституцию, касающиеся семейных ценностей // эл.ресурс Telegram - kanal Sputnik Грузия <https://t.me/SputnikGeorgia/34278> (ղիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
22. Дорога в ЕС для Грузии закрыта <https://www.youtube.com/watch?v=ZB1RYQgNHH4> (ղիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
23. Оппозиция Грузии показывает свое истинное лицо // эл.ресурс Telegram - kanal georgiafacts, 9.07.2024 <https://t.me/georgiafacts/11627.fi.fr/ru/кавказ/20240709-посол-ес-в-грузии-процесс-присоединения-страны-к-евросоюзу-приостановлен> (ղիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
24. Евросоюз приостановил процесс интеграции Грузии // эл.ресурс Новости Mail, 9.07.2024 <https://news.mail.ru/politics/61860267/> (ղիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
25. В след за немцами и американцами французы отказались напрямую оказывать финансовую помощь Грузии // эл.ресурс Telegram - kanal georgiafacts, 12.07.2024 <https://t.me/georgiafacts/11639>.
26. Франция приостанавливает прямую помощь грузинскому бюджету // эл.ресурс Эхо Кавказа, 11.07.2024 <https://www.ekhokavkaza.com/a/33032821.html>
27. Политолог **Тарасов**: Грузия меняет курс, чтобы избежать «украинизации» <https://news.mail.ru/politics/61869900/> (ղիտման ամսաթիվը՝ 18.09.2024).
28. Շատ բան պայմանավորված է ԱՄՆ-ի նախագահական ընտրությունների արդյունքներով // эл.ресурс irates.am, 01.08.2024 <https://goo.su/8f1aUM0> (հղումը կրճատված է; ղիտման ամսաթիվը՝ 18.09.2024).

Տժնա/Հանձնվել է՝ 19.09.2024  
 Քեչենզրոնա/Գրախոսվել է՝ 26.09.2024  
 Քրրնյա/Ընդունվել է՝ 03.10.2024